

ՀԱՅԿԱԿԱՆ ԳԵՂԱՐՈՒԵՍՏՐ

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻՆ ՄԷՋ



Մասնագիտական թերթի մը դատաստանը հայ երաժշտութեամ մասին . — Նուագահանդէս մը փարիզու մէջ . — Հայ երաժշտութիւնը՝ համեմատուած յունական և ռուսական երաժշտութեամ հետ . — Հայ վաղամեռիկ երգիչ մը . — Յովակիմ Մուղումեան . — Նեմսագրական ակմարկ . — Եւրոպական թերթերու գնահատումը :

Mercure Musical (15 Mai 1907)

« Ժողովրդական երաժշտութիւն » վերնագրով կը գրէ :

« Տիկին Մարգարիտա և Տիկին Շուշիկ Բարայեանէն տրուած ժողովրդական երգերու և պարերու նուագահանդէսը հեշտալի պտոյտ մ'եղաւ, ճոխ՝ զիւտերով և անակնկալներով՝ Հայաստանի, Ռուսիոյ, Յունաստանի և Ֆրանսայի մէջ, — անցեալի Ֆրանսային մէջ և այսօրուսին՝ որ դեռ կ'երգէ : Պ. Լուի Լալուս սկսաւ յիշատակել այն տեղերն և տեսարանները զորս քիչ ատենէն երաժշտութիւնը պիտի ոգեւորէր : Յուզումներով խօսեցաւ այն Արեւելի երկիրներուն վրայ, երազի երկիրներ, ուր բնական են գեղեցկութիւնը և զուարթութիւնը : Խօսեցաւ ռուսական այն դարձդարձիկ և արբեցնող պարերուն վրայ որոնցմէ կարծես մոռնալու և ոչնչանալու փափագ մը կ'անցնէ : հայկական պարերը՝ այնքան բնական, այնքան ճկուն, այնքան աշխոյժ որ կարող են մարմնոյ զիրքերով և ներշնչանակ ձեւերով բացատրել հոգւոյն չափակցութիւնները և յուզումները . զարմանալի արուեստ անտեղեակ պայմանադրութիւններէն որոնց մէջ կ'ապրի մանաւանդ թէ կը մեռնի եւրոպական գործիական երաժշտութիւնը : Խօսեցաւ նաեւ մեր քաղցր հայրենեաց՝ Ֆրանսայի վրայ և իւր դաշտանկարներուն սիրունութեան վրայ, երազող Պրեդայնի վրայ,

որ կը նիրհէ դարաւոր քնով մը : Հայկական մեղեդին անբացատրելի գողտրութիւն մ'ունի, Զկայ աւելի պարզ և աւելի նուրբ բան մը՝ քան այս անոյշ ելեւէջներով երգերը, որուն մեղեդին և չափակցութիւնը՝ ունին ամենէն ազատ շնորհքը զոր կարելի ըլլայ երեւակայել : Պանդուխտին երգը. « Սիրտս նման է եւ փրած տներ » ունի մեղեդիական զօրութիւն և ծաւալ մը՝ որ յիրաւի հիւսնալի են : Կը տարաւ ծուր մեծ գետի մը նման և կը գլորէ իւր կոհակներուն մէջ տխրութիւնը և գերաւ զոյն մեղամաղձութիւնը անոնց՝ որ կը թողուն հայրենի երկիրը : Օրօրը՝ գողտը է նման մօր մը համբոյրին՝ քնացած տղու մը ճակտին վրայ . իսկ սիրոյ երգը Կը քայէ, կը փայլի իմ սիրելիս առաջ կու գայ կրքոտ և անկեղծ սէրէ մը : Անոնք որ արդէն բերկրանքն ունեցած են լսելու Օրիորդ Բարայեանի երգելն այս մեղեդիները որ փթթած են իւր երկրին մէջ, պիտի կարենան ըմբռնել յուզման սաստկութիւնը զոր զգացինք լսելով իւր ճկուն և վճիտ ձայնը՝ որ հեշտալի կերպով կը նուագէր այս սքանչելի երգերը :

Այս մեղեդիները ներդաշնակուած էին հազուագիւտ ճարտարութեամբ մը և նուրբ ճաշակով մը Գերապատիւ Կոմիտաս վ.էն. նոյնպէս ինքն էր որ դաշնակի համար ձայնագրած էր հայկական պարերը զոր մեզի լսեցուց Տիկին Շուշիկ Բարայեան. ձեւի պարեր, գեղարուեստական պարեր

ծայրագոյն Արեւելքին պարերուն նըման, բայց շատ մօտ մեզի, յիշեցնող այն պարող խումբերուն և բողբոջներուն՝ որ կը դառնան հին քանդակուած սափորներուն շուրջը:

Ճկուն և զանազանեալ չափակցութիւններ, ֆիզիզական ներդաշնակութեանց կենդանի պատկերներ. մեղեդիներ՝ որ աչքերուն մէջ կը տպաւորեն շնորհալի կերպերը և արձանագործական ձեւերը: Չմտ գիտեր թէ ինչ պիտի ըլլային այս պարերու փափկութիւնը Արեւմուտքիներուն կոշտ մատներուն տակ: Տիկին Շուշիկ Բաբայեան ո՛չ միայն ներկայացուց զանոնք՝ իրրեւ ճշմարիտ արհեստագէտ անստգոտանելի արհեստով մը՝ այլ նաեւ յուզմունքի համագիշ ճաղցրութեամբ մը և նուրբ զգացուածով այն շարժուն արուեստին՝ որուն կողմնիւրը գրեթէ կորսուած է մեզի համար: Ռուսական երգերը չունին ոչ այդ պաշտելի պայծառութիւնը և ոչ այդ ինքնածին շնորհքը, համակամեալ մեղամաղձութեան քող մը կը կրեն կամ ընդհակառակն իրենց գիւրնը կը թողուն յիմար և վայրագ հրճուանքի մը: Նոյն իսկ հարսանեաց երգերուն մէջ, զոր ժպտուն կը կարծէինք, կը տիրէ դեռ տխրութիւնը: Նոր հարսը կու լայ և կը հնծենէ թողնելուն համար իւր ծնողը անծանօթ օտարականի մ'երթալու համար: Պարերը՝ յստակ կերպով չափակցուած և յղուած չափաւոր շարժումով մը կը սկսին, որ երթալով կ'երազանայ և միայն այն ատեն կը դադրի երբ կարգաւորը շնչասպառ եղած է: այս պատճառաւ ալ վերջնական յանգեալը չունին: Կ'արտայայտեն ուժով ձեւեր և շարժման զառանցանք մը անծանօթ Եւրոպոյ միւս ժողովուրդներուն:

Պիտի նախնարէի լսել յոյն մեղեդիները յետ հայկական երգերուն, որոնց աւելի կը մօտենան քան երաժշտութիւններուն այն Սկիւտացւոց՝ զորս Աթէնք յարմար կը դասէր միայն խաղաղութեան պահապաններ ըլլալու: Օրիորդ Բաբայեանի մեզ լսեցուցած երեք մեղեդիները, հաւաքուած են Պ. Բէրնոյէն ձայնագիր գործւոյն օգ-

նութեամբ՝ Քիոս կղզւոյն մէջ: Այս գիտնականօրէն հաւատարիմ յիշատակարանին վրայ է որ աշխատեցաւ Պ. Ռապէլ, որուն կը պարտինք այն սիրուն ներդաշնակութիւններն զոր զգեցած են: Այս երգերը լուսաւոր են նման այն երկնքին որ զիրենց փթթեցուց, ներդաշնակ և անարատ՝ նման յոյն տաճարի մը գիծերուն. առաջինը Երատամպի սրամիտ է և նուրբ և ատտիկեան շնորհք մ'ունի. երկրորդը մեղամաղձիկ սիրոյ երգ մ'է արտայայտութեան տարօրինակ խոտութեամբ մը: Վերջինը թրիթարոս, պարի երգ մ'է, զուարթ և վայելուչ, զոր դաշնակին ընկերակցութիւնը կը շրջապատէ արեւային սարսուռով մը: Այս մեղեդին ներդաշնակուած է յատկապէս այս նուագահանդէսին համար և դեռ չէ հրատարակուած:

Հարկ եղաւ Ֆրանսա վերադառնալ. յետ սահուն անասնման երաժշտութեան, ազատ ինչպէս աղբիւրը՝ որ կը բղխի և քամին որ կ'անցնի, կու գայ երաժշտութիւն մը չափակցեալ, կանոնաւոր, տրամաբանուած ու բարեխառնուած: Շատ զարմացայ այն արուեստին վրայ՝ որով նուագեց Տիկին Շուշիկ Բաբայեան շարք մը կտորներ՝ քաղուած Պրանսիացէն և Պըզարէն, նշաւաւոր « Վիներգուներ » (luthiste) Ժէ. դարուն սկիզբն ապրող. Տիկին Բաբայեան զգացնել տուաւ վիինի խառնուած և ձուլուած հնչիւններու տպաւորութիւնները և այսպէս տուաւ այս երաժշտութեան իւր արուեստակեալ շնորհքը քիչ շատ շուհուած և սեթեւեթ: Վ. Տէնտիի և Լըմէկերի հաւաքածոյներէն քաղուած Օվէրնիյ և Վիվալդի պարերը և լեռնային երգերը սանդալներով պարեր են, ինչպէս ոտս պարերը կօշկով պարեր, բայց բանաստեղծութիւնը երբէք բացակայ չէ և Ժիլ դաւուն երգահանները, այնքան սիրող այս դաշտային զբօսանքներուն, մեզմէ առաջ զգացեր էին զայն:

Պ. Լաուրիոյէն ներդաշնակուած երկու կեդտական երգերը *Merlin au berceau* և *Chanson de la Mariée* ունին քաղցրօրէն մեղամաղձիկ և երազկոտ ներշնչ-

չում մը, տօգոյն ծաղիկներ անուշարոյր ամայութեանց : Ընդհակառակն՝ Ռ. տը Գասդէրայէն ներդաշնակուած ժԳ դարու բրովանսալ գեղօնը շլացուցիչ էր զուարթ արեւով և երիտասարդութեամբ : Նուագահանդէտը կը վերջանար Տէնտիի հաւաքածոյքին թատերական « Pernette »-ով : Երագրին այս բոլոր մասը շատ հետաքրքրաշարժ էր, բայց աւելի կ'ուզէի լսել զայն՝ սկսած առինք. վասն զի թափառած էինք այնպիսի գեղեցիկ երկիրներու մէջ որ՝ Ֆրանսայի քօղարկուած երկիրներ՝ կուրուած էր թիչ մը իւր չափաւոր հմայքը : Խանդավառ ընդունելութիւնը՝ որ եղաւ մեծ հասարակութեան նոր ծանօթացած երկու հազուագիւտ արհեստագէտներու, պիտի ճարձալերէ զիրենք, ինչպէս որ կը յուսամ, մեզ ծանօթացնելու նոր հրաշալիքներ : Որպիսի երազ, տեսնել Հայաստանի այս պարերը այնքան ազնուական, ներդաշնակ և աշխոյժ : Օր մը պիտի չգործադրուին անոնք » : (HENRI DE BUSNE)

Թրգմ. ԱՍԳԵՏ

Փարիզու մէջ թոքախտի զոհ գացած է երիտասարդ հայ երգիչ մը Յովակիմ Մուսոնեան, զեսպաններու և նշանաւոր անձ. նաւորութեանց սալտոններուն մէջ յաճախ ծափահարուած իր զգայուն և յուզիչ ձայնովը :

Երիտասարդ արուեստագէտին հոգին դրուած է ամբողջովին այն սրտառուչ ճառին մէջ՝ զոր անոր ընկերներէն մին արտասանած է իր դամբանին վրայ, և զոր, իբրեւ կենսագրութիւն վաղամտերի երգչին, կը ներկայացնենք հոս մեր ընթերցողաց :

« Տիկին, ներեցէք եթէ համարձակուիմ եմ այսօր, իմ դողդոջուն ձայնով, Յովակիմ Մուսոնեանի դամբանականը անել. Տիկնայք, Պարոններ, Հայրենակիցներ, ներեցէք եթէ համարձակուիմ եմ այսօր մի քանի վայրկեաններ միայն խոռովել և յուզել Զեր սրտերը՝ իմ արդէն իսկ խոռովուած և յուզուած սրտի հետ միասին, իսկ գնալ յետոյ, շարունակել ընդ միշտ իմ լացը ու կոծը, իմ անմխիթար ցար :

Ճանչցուած ամէնքից, սիրուած ամէնքից, յարուած ամէնքից՝ բարձր էր նա հոգով, լի զգացմունքներով՝ վսեմ գաղափարներով :

Ծնած Շուշում, 1883 թուականին, կըրթուած և հարուստ ընտանիքի զաւակ, ուրոնք սակայն զօրախտաբար զոհ եղան իւր 16 տարեկան հասակում մարդկային ինտրիկների և ընկան ամենայնոքին աղքատութեան մէջ. խեղճ հայրը՝ որը նոյնքան վարժուած էր հանգիստ, ուրախ և լայն կեանքի, իւր զօրախտութիւնից յետոյ երկար տարիներ ստիպուած էր անցկացնել բանտերի չորս նեղ պատերի մէջ՝ ծծելով նրա խոնու և հիւանդոտ օդը՝ ապրելով նրա չոր հացով և մի քանի կաթիլ ջրով :

Յովակիմը իւր 16 տարեկան հասակում տեսաւ այդ ամէնը, թշուառութիւն՝ զրկանք, զօրախտութիւն, տառապանք :

Մինչև այդ նա ստացած էր արդէն համարեա կատարեալ ուսմունք, և մինչքեզ հայրը բանտի չոր պատերի մէջ լացուկոծ էր անում՝ աղի արցունք էր թափում, ինքը ստիպուած էր թողնել հեռանալ վարժարանը, որովհետեւ նա անկարող էր այլ եւս 8 ոտքի լի տարեկան վարժարանի թռչակ վճարել :

Եւ այնուհետեւ ստիպուած էր նա ամբողջ մի տարի թափառել փողոցներում. տեսնել, տանիլ ուսումնասիրել իմաստասիրի նման մարդկային ամէն տեսակ զգացմունքները, չարչարուիլ նրա հետ, տանջուիլ նրա հետ, և պատրաստել իւր սիրտը, հոգին և գաղափարը իւր ամբողջ ազգի, ապագայ մարդկութեան պատիւն և պարծանքը լինելու համար :

Ահա մի այդպիսի հանձարի երեւան զաւու համար անհրաժեշտ էր կարծես որ Պ. Պօղոս Կարա—Մուրզա, մեզ այնքան ծանօթ Կարա—Մուրզայի՝ եղբայրը, գնաւ Շուշի կոնցերտ տալու և Յովակիմը խուժի մէջ առնելու :

Ահա այդ վայրկեանից էր որ սկսեց Մուսոնեանի երաժշտական շրջանը :

Իւր 17 տարեկան հասակի ձայնը, իւր արտիստի դեռեւս ծածուկ մեծ յատկու-

թիւնները գրաւեցին անմիջապէս կարա-
Մուրզայի ուշադրութիւնը:

Այդ վայրկեանից կարա-Մուրզա դա-
ռաւ նրա առաջին և հիմնական բարերարը.
և նրան ենք պարտական ամենէն առաջ որ
նա կարողացաւ իւր անսխալ հասկացո-
ղութեամբ մարդկութեան քառսի միջից
որսալ այն՝ որը ապագային պիտի լինէր
Հայութեան պատիւը և պարծանքը:

Կարա-Մուրզա չսխալուեց, նա փու-
թաց փող գտնել, տուեց մի կոնցերտ Շու-
շուս և նրա հասոյթով Յովակիմին ուղար-
կեց թիֆլիս, ուր 2 տարի շարունակ, ա-
մենայն յաջողութեամբ և մեծ քայլերով
դիմում էր դէպ յառաջ, բարձրանում էր
երազուրթեամբ երաժշտութեան տաղանդի
աստիճանները, և ընդգրկում էր բարձրը,
ճշմարիտը, անկեղծը և զազափարականը:

Թիֆլիսը սակայն շատ փոքր էր վերջ
տալու իւր զազափարների ծաւալմանը. նա
դիմեց Փարիզ՝ զազափարի, ուսմունքի գե-
տութեան և երաժշտական գեղարուեստի
գիրկը:

Թոյլ տուէք կանգ առնել այստեղ մի
քանի վայրկեան և նկարագրել Ձեզ իւր
հոգեկան և զազափարական վիճակը Փա-
րիզ հասած ժամանակ:

Եթէ արդէն դեռ եւս Փարիզ չհասած,
Յովակիմը ցոյց էր տուած երգչի տաղան-
դաւոր արտիստի առաջնակարգ յատկու-
թիւններ, եթէ նա ունէր արդէն դեռեւս
Փարիզ չհասած՝ մաքուր, մեղմ, քնքոյշ,
զգայուն, մեղամաղձոտ ձայն. եթէ նա
ունէր արտայայտելու և երգելու մեծ ար-
տիստի ամէն տեսակ յատկութիւններ, մեծ
ընդունակութիւն և իդէալական հարստու-
թիւն, դեռեւս սակայն այդ յատկութիւն-
ները իրանց զազաթնակէտին չէին հասել.
կային նաեւ շատ ուրիշ յատկութիւններ
որոնց դեռեւս երեւան չէին եկած:

Եւ այդ յատկութիւնները իրանց զա-
զաթնակէտին հասնելու և երեւան զալու
համար, պէտք էր մի ուժեղ ձեռք, փոր-
ձուած և գիտուն անձնաւորութիւն՝ անձ-
նաւորութիւն որին Յովակիմը մինչեւ վեր-
ջին վայրկեանը մնաց երախտագէտ, որին

նա մինչեւ իւր վերջին շունչը սիրեց և
յարգեց, որի մասին նա շարունակ ուրա-
խութեամբ և իւր հոգեկան ամենանուրբ
զգացմունքներ թառերով խօսում էր ինձ
հետ: Այդ անձնաւորութիւնը այստեղ է
այժմ՝ խորասուզուած սուգի և ցաւի ան-
մխիթարութեան մէջ:

Այդ անձնաւորութիւնը, հայրենակիցներ,
Օր. Բարայեանն է, և աւելի քան իւր
ճնոցաց, աւելի քան որ և իցէ մէկին ար-
տայայտեց նրան մեր ամէնքի երախտեղը
և մխիթարութեան բառերը:

Փարիզում իւր յաջողութիւնները ան-
վերջ եղան, և քիչ ժամանակի միջոցում
բարձրացաւ նա, իւր Պրոֆեսորների ամե-
նասիրելի աշակերտը զառաւ և իւր ա-
մենափայլուն ապագայով ամէնքին յոյս էր
տալիս ամէնքի սիրտն էր լեցնում:

Marquise St. Paulի միջոցաւ նա
բարձրացաւ Փարիզի ամենամեծ Սալոն-
ների բեմերի վրայ:

Եւ ո՛հ ինչպիսի՜ ցաւերով և սրտիս թե-
ւերի իրարանցմամբ յիշում եմ այն եր-
ջանիկ երեկոյները երբ վերադառնալով
իւր կոնցերտներից սրտի զոհունակու-
թեամբ, իդէալական երջանկութեամբ պատ-
մում էր ինձ իւր աներեւակայելի մեծ յա-
ջողութիւնները:

Conservatoireի աշակերտ՝ նա շատ
լաւ ծանօթ էր ֆրանսիական ամենամեծ
երաժշտական շրջաններին, և Ձեզանից
շատեր անտարակոյս լաւձ կը լինին, Du-
vernoy-ների, Perrier-ների, Brémont-
ների և այլ շատերի ամենասրտաշարժ և
զգայուն զովասանքները: Ձեզանից շատե-
րը անտարակոյս կարողացած կը լինին Fi-
garo-ների, Gaulois-ների, Gil-Blas-նե-
րի, Mercure Musical, Courrier Mu-
sical-ների զովասանական հրաշալի կրի-
տիկները: Կարողացած կը լինիք նոյնպէս
այսօրուայ բազմաթիւ լրագրիւնների մէջ
նրա մահուան գուժումը և նրանց անկեղծ
ցաւակցութիւնը հայ ամենամեծ Tenor-ի
մասին:

Իսկ թէ և ապագան, շատ մօտ ապագան
ի՞նչ էր սպասում նրա համար, ո՛հ հայ-

բենակիցներ այդ շատ դառն է մտարբերելու՝ ո՛հ որքան անգուլթ եղաւ բնութիւնը նրա համար, որքան սրտաճմլիկ, որքան անիրաւ:

Անցած արդէն մարդկային ամէն տեսակ չարչարանքներից, տանջանքներից, տեսած և կրած ամէն տեսակ զրկանքների, ցաւեր, տառապանքներ և թշուառութիւններ այնքան մեծ համբերութեամբ ստոյիկ իմաստասիրի նման:

Եւ այժմ երբ նա սկսել էր սիրել, ապրիլ, ապրիլ ու երգել, երգել շարունակ, մեղմ և տկար, երգել գեղեցիկը, բարին, վայելել կեանքը, յաղթանակ ... պսակ ... Բայց ո՛հ այդ ամէնը, այդ ամէնը, սիրելի Յովակիմ, քեզ հետ յաւիտեան գեղեզման տարար:

Ահա թէ ինչպէս եղան Յովակիմի վերջին վայրկեանները: Մինչև վերջին վայրկեանը, մինչև վերջին շունչը նա չհասակացաւ իւր դրութիւնը, մի մաներկորդ նա չտարակուսեց թէ ինքը պիտի մեռնի: Հինգշաբթի* երեկոյեան էր M.^{me} Amicի հետ միայնակ էինք իւր սենեակում: Յանկարծ ուզեց Champagne, շիշը լինէր ... Ածեցինք մի գաւաթ. « ո՛չ, ասաց ուզում եմ Ձեզ հետ միասին խմել »: Ծար չկար, պէտք էր հնազանդիւ. ուխտած էինք չմերժել նրա ո՛չ մի ցանկութիւնը, չմերժեցինք և այդ: Գաւաթներս իրար դպան և նա ուրախ էր:

Ուրբաթ առաւօտեան ժամը 6ի մօտ, երկու վայրկեան դեռեւս առաջ, ուրախ էր և ծիծաղը երեսին, և առանց տրտունջի, ո՛չ մի տանջանքի, աւանդեց հոգին:

Անտարակոյս ինձ է պատկանում այստեղ Ձեզ ամենի առջև, յայտնել հասարակապէս իւր ծնողաց և Հայութեան խորին՝ շնորհակալութիւնները և երախտը Պարոն և Տիկին Amicներին. Տիկին Amicին որը մինչև վերջին վայրկեանը մայրական գլխալից խնամքներով ամենայն համեստութեամբ և անձնութեւ

թեամբ կատարեց Յովակիմի մինչև վերջին ցանկութիւնները:

Տիկին Բարայեանին որը յանձն առաւ պատասխանատուութիւնը Յովակիմի հիւանդութեան լուրը յայտնել իւր այժմ աղքատ, նոյն իսկ չոր հացի կարօտ ծնողացը, որոնց միակ յոյսն էր նա և սրբազան փրկիչը իրանց այժմեան դառն և արտասուալից դրութեանը:

Յայտնել խորին շնորհակալութիւններ դարձեալ Մարգրետէի St. Paulին և Comtesse de Brouին որոնց խնամակալութեամբ նա այնքան ազատ մուտք ունեցաւ փարիզի ամենամեծ Սալօններում երգելու, և որոնք Զուրալիանի ուղարկած զումարի հետ միասին կազմում էին իւր ապրուստի միակ միջոցը:

Շնորհակալութիւններնոյնպէս իւր Conservatoire-ի Պրոֆեսոր Duvernoy-ին և Պ. Aubry-ին:

Իսկ այժմ երբ իմ սրբազան պարտքը կատարած եմ համարում, թոյլ տուէք, Տիկին, թոյլ տուէք, հայրենակիցներ, դիմել այսօր թարմ ծաղիկներով շրջապատուած իմ դժբախտ ընկերոջս, յայտնել նրան իմ վերջին զգացմունքներս և յարգանքներս իմ գաղափարի եղբորս:

Խռոված և կատաղի ուկիանոսի տարածութեանը մէջ՝ նաւերի նման, կոռուստ էինք մեր ամբողջ ոյժերով մարդկութեան թշուառութեան ուկիանոսի հալածող և կուլ տուող ալիքների դէմ:

Հեռուից իրար նշմարեցինք, տեսանք մեր դրութիւնները, մօտեցանք իրար, զըրկեցինք միմեանց, ազատութիւն կոչեցինք, յաղթութիւնը մերն էր ասացինք, և մեր բազուկների ամբողջ ոյժերով մի տարի շարունակ յառաջ մղեցինք մեր իդէալը:

Ուկիանոսը հանդարտուեց մեզ համար, ալիքները քաշուցին, ճանապարհը հարթուեց. և անհէնց այդ վայրկեանին, հազար անգամ փափոսելի ընկեր, առանց կասկածելու յանկարծ խորասուզուցիք անհուն ուկիանոսի խորը: Ի՞նչ ասեմ քեզ այժմ, ի՞նչպէս մխիթարեմ այլ եւս ինչգինքս:

* 27 Յուլիսի 1907 .

Բայց այսօր ովկիանոսը հանդարտ է և ճանապարհը, խաղաղ, հարթուած, և գիտցիր, սիրելի, ինչ որ քաղեմ, յաղթանակ, պսակ, այդ ամէնը քոն են, քոնը:

Դէ՛հ այժմ զնա հանգիստ և խաղաղ քնելու յախտենական անուշ քունիդ մէջ: Միբիլի ոսկրներդ յախտեան յարգանք »:

Ա. ՅԱՆՆԵԱ

Փարիզու օրագիրները յաճախ խօսած են Պ. Մուզունեանի վրայ. աւելորդ չէ յետադարձ երգա՝ ակնարկ մը՝ ի պատիւ իւր յիշատակին:

Le Mercure Musical, 15-XII-06 խօսելով Կոմիտաս Վ.ի սարքած երաժշտութեան մասին, կը գրէ.

... « Մուզունեանին կը պարտինք նուագահանդէսի լաւագոյն վայրկեանները: Այս երիտասարդը, Օր. Մարգարիտէ Բարայեանի աշակերտ, վերնաբարի (ténor) այնպիսի հիասքանչ և զողորմիկ ձայնով մ'օժտուած է, որ արուեստի կողմանէ՝ կրնայ ըսուիլ թէ սորվելու բան մը չունի: Ըսածիս վրայ զղջացած չեմ ըլլար սակայն, եթէ աւելցնեմ որ իր չափազանց ներդաշնակ ու սրտագրաւ եղանակը (interprétation) երբեմն քիչ մը Թատերական թուեցաւ ինծի, և թէ աւելի կը սիրեմ Օր. Բարայեանի կերպը, իր նորութեան, շնորհալիութեան և սիրուն պարզութեան համար, և այլն »:

Խորին զգացմամբ կը խօսին իր վրայ՝ Revue Musicale, 1907. — Le Monde Musical, 30 նոյեմբ. 1906. — Mercure Musical (1 Ապրիլ 1906) որ ի միջի այլոց կ'ըսէ. « ... հայկական երգերու մէջ, — սրտատուչ մեղամղձութեամբ աուցուն, — Պ. Մուզունեան սքանչելի է » (Louis Laloy). — « Այս նուագահանդէսը — կը գրէ Gil Blas (26 փետր. 1907) կազմուած էր հայկական երգերէ՝ զորս տաղանդով նուագեցին ՊՊ. Շահ Մուրատեան, Մուզունեան, Օր. Բարայեան »: — Նոյն « նուագահանդէսին մէջ — կը յաւելու Journal (25 յունիս, 1906)

ծափահարեցինը Պ. Մուզունեան », և այլն: — Դարձեալ, Le Mercure musical (15 մայիս, 1906). « Պ. Մուզունեան, արդէն մեր ընթերցողներուն քաջածանօթ, կը նուագէ արտայայտումի ճշդութեամբ և ձայնի ազահովութեամբ մը՝ որ շատոնց պէտք էին զիրքը Scholach նուագահանդէսներուն սահմանել »: (Chambellan). — Gauloisն ալ կը յայտնէ. (17 նոյեմբ. 1906). « Հաճոյքով ունկնդրեցինք հայ սիրուն ténorի մը (Պ. Մուզունեանի) նուագած հայկական ու ռուսական եղանակներուն »: — նոյն համարումը՝ նաեւ Guide Musical (Պրիւքսէլ, 25 նոյեմբ. 1906) — Իսկ Le Monde Musical կ'ըսէ. (15 մայիս, 1907). « Հայ ténorը, Պ. Մուզունեան, որուն զեղեցիկ ձայնին վրայ խօսեցանք արդէն սքանչացուեցաւ մանաւանդ հայ ժողովրդական երգերու մէջ, որոնց տուաւ նա բոլոր իրենց արեւելեան անուշութիւնը » (A. M.). — Հաճոյքով յիշեցին նաեւ Clitandre իր Autoritéին մէջ (նոյեմբ. 1906). — Simple Revueն (15 մայիս, 1907). — République Radicale (7 մայիս, 1907), — Semeur (28 դեկտ. 1906), — Journal Amusant (4 մայիս, 1907), — Rappel (7 մայիս, 1907). — New-York Herald (28 ապրիլ, 1907). — 1906, մարտ 15 թուին Mercure Musicalն ալ. « ... երիտասարդ ténor մը, Պ. Մուզունեան, կը ծափահարուէր զարմանալի տեւողութեան և կոկորդին (organe) ամենաքաղցր թրթռացումին համար »: — Մինչդեռ Figaroն (20 ապրիլ, 1906). « Աս երիտասարդ և սքանչելի հայ ténorը, Մուզունեան, զնահատել տուաւ իր թրթռուն, տաք և նորօրինակ հմայքով լի ձայնը՝ հայկ. և ռուս. ժողովրդական երգերու մէջ »:

Շատ դիւրաւ կը մեկնուի այլ եւս այն ցաւը՝ որ պիտի յաջորդէր այս ուրախ լուրերուն, երբ երիտասարդին մահուան գուժը թնդաց.

« Կը լսենք Պ. Մուզունեանի՝ հայ քեւորի մահը, որ ընկճուեցաւ երազ հիւժոյղ թոքախտէ, 23 տարուան »: (Echo de

Paris, 30 յունիս, 1907). — « Կ'իմացը-
նեն հայ երիտասարդի մը մահը, Պ. Մու-
ղունեանի, Բարիզու Conservatoireի ա-
շակերտ, որ մեծ յոյսեր կը խոստանար
իրրեւեն ténor »: — Gil Blas (30 յու-
նիս, 1907). « Իմացանք Պ. Մուղունեանի
մահը, հայ նշանաւոր ténor, որ ընկճուե-
ցաւ հիւծախտով, 23 տարուան » (De
Tanville). — Վերջապէս, նոյն ցաւով,
Figaroն ալ (30 յունիս, 1907). « Կ'ի-
մանանք թէ մեռած է Պ. Մուղունեան, հայ
ténor, որ շատ ծանօթ է բարիզեան սա-
լոններու մէջ » (Ferrari):

*

ՀԱԿԱՏԱԳՐԻՆ

Ա.

Ո՛ւր կը տանիս. — իրեն ըսի խրոսոված
Ընդվզողի խորիստ նայուածք մ'տանելով .
Ալ բաւ է, բաւ, որքան ըզգեց սիրեցի,
Հետեւեցայ առաւազանքի հետքերուդ :

Եկայ աշխարհ. — ճակտիս վերայ Թափեցիր
Մօրքս չիթերն արտասուքի, աչքերէս
Հեռացուցիր կեանքի ժողիւտն առաջին,
Դերբի շուրթիս չոր ըստինքներն դատարկուած :

Դեռ չըմանայած Թէ խաղն ի՞նչ է, լըտեսած
Աստղերու լոյսն ու վարդին բոյրը չառած,
Ողբ ու հառաչ, անէծք, աղբրունջ լըսեցի
Ճանցայ սեւ սուգը՝ տեսայ ճանկը մահուան :

Ու կոկորն — սիրտըս կարտաով դեռ ծարաւ
Համբոյրներու, զեփուներու, շողիւտի,
Հնդդ ծրոնցաւ՝ այդ ամբողջին զըրկուած՝
Տանջանքներու անտանելի բեռնն տակ :

« Քաւէ՛ » ըսիր. — և ցաւեցի անդադար՝
Յամռնելով դիս փորձանքներուն խորտ ճամբուն,
Ու Թողուցիր դիս դեռ փոքրիկ տակաւին
Վըշտին ամէն ապտակներուն զըմշտակ :

Անցանք քեզ հետ խոնաւ աղտոտ յարկերէ
Հեւրեն մըրո՛ւրը ծըծելով, ու տեսանք
Խեղճ մանուկներ առաջ տաքուկ որբանքի,
Ու մեռեալներ գուրկ պատանցէ՛ սարսըռուն :

Ու Թողուցիր հիւսանքներու քով դիս,
Մահիւններու քով մահաւոտ. կուրծքիս վրայ
Պինդ սեղմեցի Բըրդառուցիւմն էակներ,
Համբոյրեցի լոկ զեղընցած շըրթուներն :

Բ.

Կըսկիծներով դիտեր եմ ես հայրքս ծեր
Ձիւ հողալու մըտածումէն ընկճուած
Յուսահատի մ'որոշումով՝ մազերուն
Փնակ քաշէն, շըրթուներուն պըրկումներ :

Մօրքս չոր հնդդ լըսեր եմ սարսափով
Մարած անբող Թոնիլին քով. կանթիլին
Մակայն լոյսով անոր լըսկումն եմ տեսած
Երբ մեզէ մէկը հիւանդ էր անհանգիստ :

Քանի՛ անգամ այս ճեղքերովս զողող
Փայփայած եմ կընճոտ զեղնած ճակատներ
Որոնք յոգնած և ցաւերէն յաղթուած՝
Կ'իշխային զիրկա ըստփառնքի մը տնելով :

Ու մինչեւ վերջ խեղճ կեղեցուած սըրտերու
Ողբն ու ճիւղեր լըսեցի, որոնց հետ
Եւ ալ սըրտիս կեղեցումները լացի,
Ո՛վ անողոք և դու մըտիկ լըբեր զիս :

Ուզեցիր ալ մանգաղին տալ սիրնէքս
Ազդուպէլ այդ ըստփառնքի ծաղիկներն
Ու շուրջս էին, Թողուլ մինակ զիս, վէրքիս
Վըրայ ծըռած և վըշտին հետ դէմ դիմաց :

Գ.

Ո՛ւր տեղ ծընար. — ո՞ր ամպին սեւ արգանդէն
Դուրս վիժեցար երկընթիս մէջ խուժելով,
Ի՞նչ օճերու կաթ ծըծեցիր՝ անողոք,
Եւ ո՞ր բուրնի որբեցին քեզ ողբազին :

Հակաիդ մըռայլը շատ ես շատ դիտեցի,
Աչքիդ կըրակն հաւած շանթի կը նմանի,
Շըրթունքներէդ լըլըսեցի երգ մ'որ ինձ
Պատմէր սիրոյ, յոյսի, խի՛նդի վըրայօք :

Փուշի մէջէ հետեւեցայ ցայլերուդ,
Մինչեւ հիմայ ճամբան նեղ էր և քարուտ .
Ո՛հ, զըթուլիւն, լըցադեցի վարդ մը դեռ
Մինչդեռ հըսկայ նոճաստաններ եմ անցած :

Բոլոր ցաւերն ըզգացընել տըւիլ ինձ,
Եւ ո՞ր դիպումն լըրոնցից դիս. ուղիւն
Վըրայ ծընած բոյսի մը պէս զողացի
Միշտ զողացի կեղծ անցողդ ալիքին :

Ե՛րբ պիտի աւ ամպին որոտ վըրջանայ,
Մեր զըլեռուն վրայ այդ նըղովքն ո՛վ կը կարգայ .
Ինչո՞ւ մերին զըլեռուն վրայ միշտ կը փայլի
Կարմիր փայլակը ինչ սասողի փոխալէն :

Ինչո՞ւ մըտիկ չես ըններ զիս, զըթուլիւն . . .
Սա մահուան սեւ Թիթեռնիկներն է՛ր պիտի
Հեռանան ալ սըրտե՛ս՝ ծաղիկ աղբրուլիւն,
Ե՛րբ անոր մէջ արեւը ըող պիտի՝ նետ :

Բարկութիւնէս հիմա պիտի կտորտեմ
Կեանքի բաժակն որ ճեղքիլ մէջ ես սեղմած .
Ինչ կը լամբես հոն, անոր մէջ ի՞նչ մըրուր
Եւ կամ ի՞նչ Թոյն ըստինքներէդ կը քամն :